

ՈՒՂԵՑՈՒՅՑ

**ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՎ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ
ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
(Թղթային տարբերակի լրացման դեպքում)**

Ուշադրություն՝ այս գործընթացն իրականացվում է վարորդների կողմից ինքնուրույն՝ առանց ապահովագրական ընկերության և ոստիկանության ներկայացուցչի համաձայնության և (կամ) ներկայության:

ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
Քայլ 1	Որևէ կերպ՝ այդ թվում ցանկացած հեռախոսի միջոցով առնվազն երեք անգամ լուսանկարահանում են ճանապարհատրանսպորտային պատահարում (ՃՏՊ) ներգրավված տրանսպորտային միջոցները (ՏՄ): Ընդ որում, լուսանկարահանումը (տեսանկարահանումը) պետք է կատարվի այնպես, որպեսզի լուսանկարներն (տեսանյութն) առնվազն արտացոլեն երկու ՏՄ-ների հետվթարային փոխադարձ դիրքերը և ՃՏՊ-ի հետևանքով դրանցից յուրաքանչյուրի ընդհանրական վնասվածքները
Քայլ 2	<u>Լրացնում են</u> համաձայնեցված հայտարարագիրը և ստորագրում այն
Քայլ 3	Ազատում են ճանապարհի երթևեկելի մասը
Քայլ 4	Վնաս պատճառած վարորդը ՃՏՊ-ի մասին իր կողմից վարած ավտոմեքենայի ԱՊՊԱ Վկայագրի վրա նշված հեռախոսահամարով տեղեկացնում է Ապահովագրողին տեղի ունեցած ՃՏՊ-ի մասին՝ հարցադրումների պատասխանելով առավելագույնը համաձայնեցված հայտարարագրում լրացված տեղեկատվությունը (ուշադրություն՝ ապահովագրական ընկերությունն իրավունք չունի համաձայնեցված հայտարարագրում լրացված տեղեկատվությունից ավել տեղեկատվություն հարցնել ձեզանից)
Քայլ 5	Ապահովագրական ընկերությանը տեղեկացնելուց հետո վարորդները իրենց ՏՄ-ներով հեռանում են վթարի վայրից
Ուշադրություն՝ ապահովագրական ընկերությանը դեպքի վայրում սպասելու պարտավորություն վարորդները չունեն	

ՈՒՂԵՑՈՒՅՑ

**ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՎ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ
ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
(Բջջային հավելվածի միջոցով գրանցման դեպքում)**

Ուշադրություն՝ այս գործընթացն իրականացվում է վարորդների կողմից ինքնուրույն՝ առանց ապահովագրական ընկերության և ոստիկանության ներկայացուցչի համաձայնության և (կամ) ներկայության:

ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
Քայլ 1	Վարորդներից որևէ մեկը «App Store» կամ «Google Play» հարթակներից ներբեռնում է «ASWA» անվանմամբ հավելվածը, եթե այն արդեն իսկ ներբեռնված չէ վարորդներից որևէ մեկի բջջային հեռախոսում: Նման հնարավորության բացակայության դեպքում հնարավոր է օգտվել այլ անձանց հեռախոսներից՝ վերջինների համաձայնությամբ և աջակցության պատրաստակամությամբ
Քայլ 2	Հետևելով «ASWA» հավելվածի հրահանգներին բջջային հեռախոսի միջոցով <u>լրացվում է</u> համաձայնեցված հայտարարագիրը՝ ներառյալ կատարելով դրանով նախատեսված լուսանկարները և հաստատումները
Քայլ 3	ճանապարհատրանսպորտային պատահարում ներգրավված տրանսպորտային միջոցներով հեռանում են վթարի վայրից՝ ազատելով ճանապարհի երթևեկելի մասը
Ուշադրություն՝ այս գործընթացով ապահովագրական ընկերությանը դեպքի վայրում սպասելու կամ ապահովագրական ընկերությանը հեռախոսազանգով տեղեկացնելու պարտավորություն վարորդները չունեն	